

**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԴԱՅՋԵՍԹ**

ՀՈՒԼԻՍ 2017թ

Բովանդակություն

Հաճախակի օգտագործվող հապավումներ	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	4
Իրական հատված	4
Պետական հատված	5
Դրամավարկային և ֆինանսական հատված	6
Արտաքին հատված	9
ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ. մայիս 2017	11
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	12
ԱՄՆ	12
ԵՄ	14
Զինաստան	17
Ճապոնիա	18
Ֆոնդային ապրանքների շուկա	19
Արժույթային շուկա	21
Ֆոնդային շուկա	25
ՀՈՒՆԻՍ ԱՄՍԿԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	26

Հաճախակի օգտագործվող հապավումներ

ԴՎԲ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԳԻ	Սպառողական գների ինդեքս, Արտադրողի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրելաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրելաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, «Դիլինգային կենտրոն»

ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19

Վերլուծաբաններ՝ Ա.Մաթասյան, Թ.Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Իրական հատված: 2017թ

հունվար-մայիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ՀՀ տնտեսական ակտիվությունն աճել է 6.4%-ով (YoY): 2017թ մայիսին 2016թ մայիսի նկատմամբ աճը կազմել է 8.9%-ով (YoY), իսկ նախորդ ամսվա նկատմամբ տնտեսական ակտիվությունն աճել է 1.9%-ով (MoM)¹ գերազանցելով ապրիլյան ցուցանիշները:

2017թ ՀՀ տնտեսության ճյուղերի աճը/անկումը 2016թ նույն ժամանակահատվածի նկատմամբ (YoY), %

Ոլորտ	Մյ	Ի եռ.	Ապ	Մյ
Արդյունաբերություն	17.2	16.2	4.3	20.0
Գյուղատնտեսություն	-3.7	-1.5	-5.0	-4.8
Շինարարություն	-13.5	-13.6	-13.0	-9.3
Կապի	-10.2	-7.9	-6.1	-3.9
Ծառայություններ	8.4	10.0	10.4	14.3
Առևտուր	13.7	11.3	14.2	15.0

2017թ ՀՀ տնտեսության ճյուղերի աճը/անկումը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ (MoM, QoQ), %

Ոլորտ	Մյ	Ի եռ.	Ապ	Մյ
Արդյունաբերություն	11.7	-11	-7	12.7
Գյուղատնտեսություն	20.6	-72.2	54.2	47.1
Շինարարություն	97.3	22.2	-8.8	50.0
Կապ	11.3	-9.5	0.4	2.0
Ծառայություններ	9.8	-13.0	-0.7	9.5
Առևտուր	20.0	-29.9	-1.1	6.6

¹Ռադիոծրագրերի, հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման հեռահաղորդակցության ծառայություններ


Մայիս ամսին տարեկան կտրվածքով աճն ապահովել են արդյունաբերության (20.0%), ծառայությունների (14.3%) և առևտրի (15.0%) ոլորտները: Իսկ գյուղատնտեսության, շինարարության և կապի ոլորտներում պահպանվում է անկումային դինամիկան (-4.8%, -9.3% և -3.9% (YoY) համապատասխանաբար): 2017թ մայիսին նախորդ ամսվա նկատմամբ տնտեսության բոլոր ճյուղերում աճ է արձանագրվել՝ հաջորդելով ապրիլյան առավելագույն անկումային ցուցանիշներին:

Էլեկտրաէներգիայի

արտադրության ծավալը 2017թ հունվար-մայիսին կազմել է 3.2 մլրդ կՎտ/ժ՝ 2016թ նույն ամիսների նկատմամբ ավելանալով 4.6%-ով:

Գնաճային միջավայր: 2017թ փետրվար-մարտ ամիսներին գնանկման նվազող դինամիկան ապրիլին փոխարինվեց գնաճով: Մայիս և հունիս ամիսներին, սակայն, ամսական կտրվածքով կրկին գրանցվեց խորացող գնանկումային դինամիկա: Մայիս ամսվա 0.2% (MoM) գնանկմանը հունիսին հաջորդեց 0.9% (MoM) գնանկում: Վերջինս առավելագույն պայմանավորված էր սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 2.2% գնանկմամբ: Ալկոհոլային խմիչքի և ծխախոտի գները նույն ամսում ավելացել են 0.5%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ նվազել

0.4%-ով, իսկ ծառայությունների սակագներ աճել են 0.2%-ով (MoM):



Տարեկան կտրվածքով, սակայն, գնաճը պահպանվում է՝ մայիսին գրանցելով 1.6%, հունիսին՝ 1.1% (YoY) աճ: Այդ թվում՝ սննդամթերքի և խմիչքների գներն աճել են 4.9%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ նվազել 2.9%-ով, իսկ ծառայությունների սակագները նվազել են 1.4%-ով (YoY):

Հունվար-հունիս ժամանակահատվածում գնաճը կազմել է 0.5% (YoY):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ թվով բարիքներից կազմված զամբյուղի համար հաշվարկված գնային ինդեքսն 2017թ հունիս ամսին մայիսի նկատմամբ աճել է 0.32%-ով:


Պետական հատված:

2016թ. առաջին հինգ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են մոտ 480.527

մլրդ դրամ, ինչը մոտ 7.2%-ով գերազանցում է 2016թ. նույն ժամանակահատվածի եկամուտների ծավալներին: Մինևույն ժամանակ 2016թ. հունվար-մայիս ամիսների համեմատ արդեն ընթացիկ տարվա համապատասխան

ժամանակահատվածում գրանցվել է պետական բյուջեի ծախսերի 0.4%-ով աճ՝ մինչև 520.61 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում,


դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 40.083 մլրդ դրամ՝ 2016թ. 70.304 մլրդ դրամի փոխարեն: Նշենք, որ բյուջեի եկամուտների 95%-ն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին (ավելացված արժեքի հարկ՝ 32.2%, եկամտային հարկ՝ 30.2%, շահութահարկ՝ 8%, ակցիզային հարկ՝ 7.1% և այլն): Ընդ որում՝ 2017թ առաջին 5 ամիսների ընթացքում բյուջե մուտքագրված շրջանառության



հարկի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 18.1%-ով, իսկ շահութահարկի ծավալները՝ կրճատվել 2.7%-ով: Բացի շահութահարկից, կրճատում գրանցվել է նաև պետական տուրքերի գծով. 2016թ. հունվար-մայիսի համեմատ 2017թ. հունվար-մայիսին գրանցվել է պետական տուրքերի ընդհանուր ծավալների՝ 3.4%-ով կրճատում:

Ընթացիկ տարվա առաջին 5 ամիսների ընթացքում 1.2%-ով աճել են պետական բյուջեի ընթացիկ ծախսերը: Ընթացիկ ծախսերից կրճատում գրանցվել է միայն ծառայությունների և ապրանքների ձեռք բերման (-16.2%), սուբսիդիաների (-11.4%) և դրամաշնորհների գծով (-1.3%), իսկ մյուս բոլոր հոդվածներից առավելագույն աճ գրանցվել է ներքին տոկոսավճարների (+58.5%) գծով:

2017թ. մայիսին ՀՀ պետական պարտքը հասել է մոտ 6.094 մլրդ ԱՄՆ դոլարի՝ տարվա սկզբից ավելանալով ավելի քան 2.5%-ով, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ մոտ 56.318 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում՝ ամսական աճն ապահովվել է միայն արտաքին պարտքի աճի հաշվին (+70.686 մլն ԱՄՆ դոլար), մինչդեռ ներքին պարտքի ծավալը դոլարային արտահայտությամբ մայիսին ապրիլ ամսվա համեմատ նվազել է 14.368 մլն ԱՄՆ դոլարով: Տարվա սկզբից ներքին




պետական պարտքի աճը կազմել է մոտ 3%, իսկ արտաքին պարտքի աճը՝ մոտ 2.5%: ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքում առավելագույն մասնաբաժինը 2017թ. ապրիլի դրությամբ բաժին է ընկել ԱՄՆ դոլարին՝ 39.2%:

Դրամավարկային և ֆինանսական հատված:

2017թ. հունիսի 27-ին կայացած ՀՀ ԿԲ խորհրդի նիստում որոշվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ սահմանելով 6.0%, լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 7.5%, իսկ կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:


Հիշեցնենք, որ 2016թ. ընթացքում ձևավորված գնանկումային միջավայրի պայմաններում ՀՀ կենտրոնական բանկի կողմից զգալիորեն թուլացվել են



դրամավարկային պայմանները. 2016թ. հունվարից հետո մինչ այժմ արդեն դրամավարկային քաղաքականության հիմնական

տոկոսադրույքները նվազեցվել են 9 անգամ՝ դրանով հանգեցնելով երկրում թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ տոկոսադրույքների նվազման: Մասնավորապես, ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված մինչև 1 տարի ժամկետայնությամբ դրամային ավանդների (ներառյալ ցախհանջ) միջին տոկոսադրույքն արդեն 2017թ. մայիսի վերջի դրությամբ հասել էր մոտ 7.29%-ի՝ նախորդ տարվա մայիսի նկատմամբ նվազելով մոտ 3.33 կետով, իսկ դոլարային ավանդներինը՝ 2.87%՝ 2016թ. մայիսյան տվյալի համեմատ նվազելով 1.97 կետով: Արդեն նկատելի է ԴՎՔ տոկոսադրույքների նվազեցումների ազդեցությունը նաև երկարաժամկետ տոկոսադրույքների վրա: 1 տարուց


ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքներ / 2016-2017թթ.



ավելի

ժամկետայնությամբ դրամային ավանդների միջին տոկոսադրույքը 2017թ. մայիսին

2016թ. մայիս ամսվա համեմատ նվազել է 1.8 կետով՝ մինչև 11.44%, իսկ դոլարային ավանդների միջին տոկոսադրույքը՝ 1.18 կետով՝ մինչև 5.3%: Ինչ վերաբերում է տրամադրվող վարկերի տոկոսադրույքներին, ապա ԴՎՔ տոկոսադրույքների նվազեցումների ազդեցությունն առավել նկատելի է դրամային վարկերի դեպքում, իսկ դոլարային վարկերի դեպքում տարեկան և ամսական կտրվածքով



նույնիսկ գրանցվել է որոշակի աճ: Մայիս ամսվա դրությամբ և՛ տարեկան և՛ ամսական կտրվածքով գրանցվել է դրամային 1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույքի նվազում: Կարճաժամկետ դրամային վարկերի միջին տոկոսադրույքը 2016թ.


մայիսյան արժեքի համեմատ 2.75

Աղյուսակ 1. ՀՀ Առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքներ

%	ՀՀ դրամով		ԱՄՆ դոլարով	
	1 տարուց ավելի	Մինչև 1 տարի (միջին)	1 տարուց ավելի	Մինչև 1 տարի (միջին)
Հվ/16	18.69	17.75	11.36	10.31
Փտ	18.77	18.91	9.02	10.23
Մտ	18.21	18.74	10.93	10.19
Ապ	17.63	18.43	10.58	10.22
Մյ	18.1	18.38	10.73	10.2
Հն	16.76	16.19	10.7	10.12
Հլ	17.65	17.04	10.94	10.1
Օգ	17.82	16.91	10.63	10.15
Սպ	17.27	16.97	10.95	10.06
Հկ	13.9	17.32	10.59	9.97
Նյ	16.59	15.92	10.47	9.97
Դկ	16.01	15.33	9.79	10.01
Հվ/17	16.49	17.25	10.68	10.15
Փտ	16.78	16.61	10.4	10.08
Մտ	16.09	16.31	10.34	9.53
Ապ	16.72	15.41	9.41	9.66
Մյ	16.39	15.63	10.11	11.06
MoM	-0.33	0.22	0.69	1.4
YoY	-1.71	-2.75	-0.63	0.86

կետով նվազելով՝ 2017թ. ապրիլյան արժեքի համեմատ ավելացել է մոտ 0.22 կետով (մայիսի վերջի դրությամբ կազմել է մոտ 15.63%): Դոլարային վարկերի միջին տոկոսադրույքները աճել են ամսական կտրվածքով (մայիս ամսին ապրիլի համեմատ), իսկ նախորդ տարվա մայիսի համեմատ մոտ 0.86 կետով աճել է միայն մինչև 1 տարի ժամկետայնությամբ դոլարային վարկերի միջին տոկոսադրույքը (աղյուսակ 1):

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների, 2017թ. (ամսական), մլրդ. ՀՀ դրամ



2016-2017թթ ընթացքում զգալիորեն նվազել են նաև ՀՀ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները:

2017թ. մայիս ամսվա դրությամբ բանկերի կողմից տրամադրված վարկերը կազմել են 2458 մլրդ. ՀՀ դրամ, իսկ ավանդները՝ 2433.5 մլրդ. դրամ: Նշենք, որ զգալի աճ են գրանցել ոչ ռեզիդենտներին տրամադրված արտարժույթային վարկերի ծավալները՝ նախորդ տարվա մայիսի համեմատ աճելով ավելի քան 66.7%-ով (2017թ. մայիսի վերջի դրությամբ կազմել են շուրջ 141.58 մլրդ. ՀՀ դրամ): Կտրուկ աճ էր գրանցվել 2016թ. դեկտեմբերից, երբ մեկ ամսվա մեջ ոչ ռեզիդենտներին տրամադրված արտարժույթային վարկերի ծավալները գրեթե կրկնապատկվեցին՝ հասնելով


ռեկորդային բարձր՝ 164.99 մլրդ. դրամի: 2016թ. տարեվերջից մինչև 2017թ. մայիս ամիսը զգալիորեն ավելացել են նաև ոչ ռեզիդենտներին

տրամադրված դրամային ավանդների ծավալները՝ հասնելով 150.31 մլրդ. դրամի: Նշենք, որ 2016թ. մայիս ամսվա համեմատ ոչ ռեզիդենտներին տրամադրված դրամային վարկերի ծավալներն աճել են 3 անգամ (կտրուկ աճ էր գրանցվել 2016թ. հոկտեմբերին, երբ 62.76 մլրդ. դրամից գրանցվեց աճ մինչև 121.41 մլրդ. դրամ):

Արտաքին հատված:

2017թ. հունվար-մայիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 2.3 մլրդ. ԱՄՆ դոլար (1.1 տրլն. դրամ)՝ տարեկան կտրվածքով աճելով 23.1%-ով: Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների տարեկան աճը կազմել է 20.9%՝ հասնելով 803.9 մլն. դոլարի (389.9 մլրդ. դրամ), իսկ ներմուծման ծավալներն աճել են 24.4%-ով՝

ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշներ. 2017թ. ապ-մյ. (MoM), մլն. ԱՄՆ դոլար



մինչև 1.48 մլրդ. ԱՄՆ դոլար (718.5 մլրդ.


դրամ): ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն 2016թ հունվար-ապրիլի նկատմամբ 2017թ նույն ժամանակահատվածում խորացել է մոտ 28.9%-ով՝ հասնելով -678.3 մլն ԱՄՆ դոլարի (-329.0 մլրդ դրամ): Միայն 2017թ մայիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 597.1 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 53.4%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 38.7%՝ հասնելով 195.5 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներինը՝ 61.7%-ով՝ մինչև 401.6 մլն ԱՄՆ դոլար (YoY):

2017թ ապրիլի նկատմամբ մայիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշն աճել է 35%-ով (MoM): Այդ թվում՝ արտահանման ծավալներն ավելացել են 18.3%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 45%-ով (MoM): ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն ապրիլյան 111.7 մլն ԱՄՆ դոլարից մայիսին խորացել է մինչև 206.1 մլն ԱՄՆ դոլար՝ ավելի քան 84%-ով, իսկ 2016թ մայիսի նկատմամբ աճը գրեթե կրկնակի էր: 2017թ մայիսին հայկական բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ՀՀ փոխանցված դրամական միջոցների ծավալը կազմել է 154.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա նկատմամբ աճելով 41.7%-ով (MoM): 2016թ նույն ամսվա նկատմամբ դրամական միջոցների ներհոսքն աճել է գրեթե նույնքան՝ 41.5%-ով (YoY):


Նախորդ ամսվա նկատմամբ 0.7%-ով աճել է դրամական միջոցների

արտահոսքը՝ կազմելով 86.9 մլն ԱՄՆ դոլար: Տարեկան կտրվածքով վերջինիս աճը կազմել է՝ 28.6% (YoY): Արդյունքում, դրամական միջոցների զուտ ներհոսքն ապրիլի նկատմամբ մայիսին աճել է

Գրաֆիկ. ՀՀ բանկային համակարգով ֆիզիկական անձանց անունով դրամական միջոցների զուտ ներհոսք, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշներ. 2016թ մյ - 2017թ մյ (YoY), մլն ԱՄՆ դոլար



գրեթե երեք անգամ՝ կազմելով 68 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա մայիսի նկատմամբ 2017թ մայիսին դրամական միջոցների զուտ ներհոսքն աճել է կրճատվել է 62%-ով (YoY), այդ թվում՝ ՌԴ-ից զուտ ներհոսքն աճել է 54.2%-ով, իսկ ԱՄՆ-ից՝ կրճատվել 58.5%-ով (YoY):

ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ. մայիս 2017

Ցուցանիշ	2017թ մյ.	Փոփոխություն		2017թ հվ- մյ.	Փոփոխություն
		YoY(%)	MoM(%)		YoY (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %	X	8.9	11.9	X	6.4
Արդյունաբերական արտադրանք, մլրդ դրամ	139.6	20.0	12.7	625.1	14.4
Գյուղատնտեսական արտադրանք, մլրդ դրամ	56.3	-4.8	47.1	170.6	-3.5
Շինարարության ծավալ, մլրդ դրամ	25.7	-9.3	50.0	78.6	-12.1
Առևտրաշրջանառություն, մլրդ դրամ	208.6	15.0	6.6	894.5	12.8
Ծառայությունների ծավալ, մլրդ դրամ	115.6	14.3	9.5	524.7	11.0
ՍԳԻ. մայիս, %	X	1.6	-0.2	X	0.4
հունիս, %	X	1.1	-0.9	X	0.5
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	97.3	1.5	-13.8	480.5	7.2
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	125.9	18.1	19.7	520.6	0.4
Սալդո (+/-), մլրդ դրամ ²	-28.7	+165.4	+596.2	-40.1	-42.9
Արտաքին առևտրաշրջ., մլն ԱՄՆ դոլար	597.1	53.4	35.0	2,286.2	23.1
արտահանում	195.5	38.7	18.3	803.9	20.9
ներմուծում	401.6	61.7	45.0	1,482.3	24.4
Սալդո (+/-), մլն դոլար	-206.1	91.9	84.5	-678.3	28.9
Դրամական միջոցների զուտ ներհոսք, մլն ԱՄՆ դոլար	68.0	62.1	195.7	X	X
ՀՀ պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար	6,094.9	15.6	0.9	X	X
արտաքին պարտք	4,924.4	11.1	1.5	X	X
ներքին պարտք	1,170.6	39.6	-1.2	X	X
ՀՆԱ, մլն դրամ (ընթացիկ գներով)	2016թ		YoY		
	5 079,864.6		0.2		
	2017թ I եռ.		YoY		QoQ
	971,904.0		6.5		-38.4
ԴՎՔ գործիքների տոկոսադրույքներ	Դրամ. միջ. նրգ.		Լոմբարդային ռեպո		Վերաֆին-ման
	4.5		7.5		6.0

² - Բացասական սալդոյի աճ - Բացասական սալդոյի նվազում


ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ

2017թ. հունիս ամսվա ընթացքում հրապարակված ԱՄՆ մակրոտնտեսական ցուցանիշներն ընդհանուր առմամբ կրում էին բացասական բնույթ: Մասնավորապես, չնայած, որ աշխատանքի շուկան գրեթե մոտեցել էր լրիվ զբաղվածության մակարդակին՝ այնուամենայնիվ, ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվի աճը 2017թ. մայիսին կազմել է ընդամենը 152 հազար այն դեպքում, երբ կանխատեսվում էր 185 հազարով աճ: Ինչ վերաբերում է արդյունաբերական ոլորտում զբաղվածների թվին, ապա նախորդ ամսվա 11 հազարով աճից հետո արդեն մայիս ամսին գրանցվել է 1.0 հազարով կրճատում (կանխատեսվում էր 5 հազարով աճ): Արդեն 2017թ. հունիսին ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թիվն աճել է 222 հազարով այն դեպքում, երբ կանխատեսվում էր ընդամենը 179 հազարով աճ: Գործազրկության մակարդակը 4 ամիս անընդմեջ կրճատվելուց հետո հունիս ամսին աճել է՝ նախորդ ամսվա 4.3%-ից հասնելով 4.4%-ի:

Բացասական տեղաշարժեր են գրանցվել նաև ԱՄՆ գնաճային միջավայրում: Արդյունաբերական գները մայիսին գրանցել են 2.4% տարեկան աճ՝ նախորդ ամսվա 2.5%-ի փոխարեն, մինչդեռ ամսական

**ԱՄՆ / Գործազրկության
մակարդակ / 2017թ., ամսական**




կտրվածքով ապրիլին գրանցված 0.5% գնաճից հետո մայիսին PPI-ն (Producer Price Index) կազմել է 0.0%: Մայիս ամսվա ԱՄՆ ՍԳԻ և մանրածախ առևտրի բոլոր հրապարակված տվյալները բացասական բնույթ են կրում՝ զիջելով կամ նախորդ ամսվա կամ կանխատեսվող արժեքները կամ երկուսին միաժամանակ: Մասնավորապես, տարեկան Core ՍԳԻ-ն (առանց էներգակիրների և սննդի գների հաշվարկվող) կազմել է ընդամենը 1.7% նախկին և կանխատեսվող 1.9%-ի փոխարեն, ամսական (MoM) կտրվածքով գնաճը

կազմել է 0.1%, ինչը չնայած համապատասխանում է նախորդ ամսվա արժեքին, սակայն զիջում է կանխատեսումները (+0.2%): Սպառողական գները (ներառյալ էներգակիրների և սննդի գները) մայիսին 2016թ. մայիս ամսվա համեմատ աճել են 1.9%-ով այն դեպքում, երբ ապրիլին աճել էին 2.2%-ով, իսկ մայիս ամսվա համար կանխատեսվում էր 2%-ով աճ: Ամսական (MoM) կտրվածքով ԱՄՆ-ում մայիսին գրանցվել է դեֆլյացիա՝ -0.1%, նախորդ ամսվա 0.2% գնաճից հետո (մայիսին կանխատեսվում էր 0.1% ամսական գնաճ): ԱՄՆ արտահանման գներն 2017թ. մայիսին տարվա մեջ առաջին անգամ գրանցել են ամսական անկում՝ ապրիլ ամսվա նկատմամբ նվազելով 0.7%-ով: Ներմուծման գները նույն ժամանակահատվածում նվազել են 0.3%-ով:

2016թ. մայիս ամսվա համեմատ 0.3%-ով կրճատվել են ԱՄՆ մանրածախ առևտրի ծավալները (ապրիլին աճել էին 0.4%-ով և կանխատեսվում էր 0.1%-ով աճ): Առանց ավտոմեքենաների հաշվարկված մանրածախ առևտրի ինդեքսը մնացել է անփոփոխ՝ 0.0%:

Մայիսին ամսական կտրվածքով գրանցվել է երկարաժամկետ օգտագործման ապրանքների

պատվերների Core ցուցանիշի (չի ներառում ինքնաթիռների պատվերները) ընդամենը 0.1%-ով աճ՝ կանխատեսվող 0.5% աճի փոխարեն: Ընդհանուր պատվերները՝ ներառյալ ինքնաթիռները, ապրիլ ամսվա




համեմատ կրճատվել են 1.1%-ով: Ընթացիկ տարվա առաջին 5 ամիսների ընթացքում երկարաժամկետ օգտագործման ապրանքների պատվերների թիվն ավելացել է 2.8%-ով:

ԱՄՆ Առաջարկի կառավարման ինստիտուտի (ISM) կողմից հրապարակված տվյալների համաձայն հունիս ամսվա ընթացքում վերամշակող արդյունաբերական ոլորտում գրանցվել է ակտիվության որոշակի աճ: Արդյունաբերական ոլորտի PMI-ն (Manufacturing Purchasing Managers Index) գրանցել է 57.8 արժեք նախկին 54.9-ի փոխարեն: Ինդեքսն այսպիսով հասել

է 2014թ դեկտեմբերից հետո գրանցված առավելագույն արժեքի:

Նշենք, որ առաջիկա ամիսներին արդյունաբերական ոլորտում դրական տեղաշարժեր ևս սպասվում են, քանի որ նոր պատվերների կոմպոնենտը ևս գրանցել է բավականին բարձր արժեք՝ 63.5՝ գերազանցելով մայիսյան 59.5 արժեքը:

ԱՄՆ ՀՆԱ աճը տարվա առաջին քառորդում կազմել է 1.4%, ինչը գերազանցել է հրապարակված




նախնական տվյալները, սակայն դեռևս բավականին ցածր է: ԱՄՆ տնտեսական աճի տեմպերն արդեն նվազում են երկրորդ եռամսյակն անընդմեջ՝ 2016թ. երրորդ քառորդի 3.5% աճից հետո 4-րդ քառորդում աճը կազմել էր 2.1%, իսկ արդեն 2017թ., փաստորեն, հասել է 1.4%-ի:

ԵՄ: ԵԿԲ-ն բարձրացրել է ՀՆԱ

աճի կանխատեսումները և փոփոխել ռիսկերի գնահատականները: 2017թ. ՀՆԱ աճի նախկին 1.8% կանխատեսումն այժմ փոխարինվել է 1.9%-ով, մինչդեռ սպառողական գների աճի տեմպերը նոր կանխատեսումների համաձայն 2017թ. կկազմեն 1.5%, իսկ 2018թ.՝ 1.3% (նախկին կանխատեսումների համաձայն 2017թ. սպասվում էր 1.7%, իսկ 2018թ.՝ 1.6% գնաճ): Ինֆլյացիայի տեմպերի հնարավոր նվազումը ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում նվազեցնում է սեպտեմբերից քանակական մեղմացման (QE) ծրագրի շրջանակներում ակտիվների գնումների ծավալների կրճատման սպասումները՝ դրանով բացասաբար ազդելով եվրոպական միասնական արժույթի վրա: ԵՄ տնտեսական աճի տեմպերն այժմ միջինից բարձր են, իսկ ինֆլյացիայի տեմպերի ավելացմանը խոչընդոտում են

ԵՄ/ ՀՆԱ աճ/2015-2016թթ.



արտաքին հատվածի ցնցումները, որոնք ժամանակավոր բնույթ են կրում: Այդպիսով, տարածաշրջանում պահպանվում է ակտիվ տնտեսական աճի և գնաճի տեմպերի միջև հակասությունը: Հունիս ամսին բազային գնաճի ցուցանիշը, որը բացառում է սննդամթերքի և էներգակիրների բարձր տատանողական գները, նախորդ ամսվա 0.9%-ից (YoY) աճել է մինչև 1.1% (YoY)՝ խթանվելով ծառայությունների ոլորտում գրանցված գնաճով: Մինչդեռ գնաճի ընդհանուր ցուցանիշը նախորդ ամսվա 1.4%-ից (YoY) հունիսին նվազել է մինչև 1.3% (YoY):

Ինչպես Գերմանիայում, այնպես էլ ողջ Եվրագոտում հունիս ամսին գործարար ակտիվության բաղադրյալ PMI ինդեքսը նվազել է նախորդ ամսվա ցուցանիշների նկատմամբ՝ կազմելով համապատասխանաբար 56.1 և 55.7 գործակից՝ նախորդ ամսվա 57.4 և 56.8 գործակիցներից հետո համապատասխանաբար: Մասնավորապես Գերմանիայում՝ ինդեքսի կազմում արդյունաբերության ոլորտի գործարար ակտիվությունն արտացոլող ինդեքսը նվազել է 0.2 կետով, իսկ Եվրագոտու համար գնահատված ինդեքսն աճել է 0.3 կետով: Առավել էական անկում է գրանցվել ծառայությունների ոլորտում՝

գործակիցը 55.4-ից նվազելով մինչև 53.7 արժեքը Գերմանիայում, և 56.3-ից մինչև 54.7 արժեքը Եվրագոտում: Չնայած ակտիվության նվազմանը՝ տնտեսական տրամադրվածությունները դեռևս օպտիմիստական են: ZEW Economic Sentiment Index-ը, որն արտացոլում է առաջիկա վեց ամիսներին Եվրագոտում տնտեսական տրամադրվածությունները, ցույց տվեց, որ առաջիկա վեց ամիսների համար օպտիմիստական տնտեսական տրամադրվածություններն աճել են՝ ինդեքսը կազմել է 37.7 կանխատեսվող 37.2-ի և նախորդ 35.1 արժեքի փոխարեն (ինդեքսի 0-ից մեծ արժեքները խոսում են օպտիմիզմի, իսկ բացասական արժեքները՝ պեսիմիզմի մասին): Գերմանիայում հունիս ամսվա ընթացիկ պայմանների ինդեքսը (German ZEW Current Conditions) գրանցել է 88 արժեք՝ գերազանցելով նախորդ 83.9 և կանխատեսվող 85 արժեքները, սակայն առաջիկա 6 ամիսների տրամադրվածությունների ինդեքսը նախորդ 20.6-ից նվազել է մինչև 18.6 արժեք՝ մատնանշելով օպտիմիզմի նվազմանը: Eurostat-ի կողմից հրապարակված զբաղվածության մակարդակի տարեկան և եռամսյակային փոփոխության տվյալների համաձայն QoQ

(եռամսյակային) կտրվածքով ԵՄ-ում տարվա առաջին քառորդում գրանցվել է զբաղվածության աճ 0.4%-ով, իսկ տարեկան (YoY) կտրվածքով՝ 1.5%-ով:


Մեծ Բրիտանիայում սպառողական գները մայիսին տարեկան կտրվածքով աճել են 2.9%-ով (2013թ. հուլիսից հետո գրանցված առավելագույն արժեք) այն դեպքում, երբ նախորդ ամիս աճը կազմել էր և կանխատեսվում էր 2.7% գնաճ: Ամսական կտրվածքով գնաճը կազմել է 0.3%, ինչը չնայած զիջում է ապրիլյան 0.5% աճի ցուցանիշին, այնուամենայնիվ գերազանցում է կանխատեսվող 0.2% արժեքը: Նշենք, որ նախորդ տարվա մայիսի համեմատ առանց էներգակիրների և սննդի գների հաշվարկվող Core ՍԳԻ աճը կազմել է 2.6% նախկին 2.4%-ի փոխարեն: Մանրածախ գները (RPI) նույն ժամանակահատվածում ևս գրանցել են սպասվածից մեծ չափերով աճ (տարեկան +3.7%, ամսական՝ +0.4%), մինչդեռ արդյունաբերական գները նույն ժամանակահատվածում նվազել են:

Տարեկան (YoY) կտրվածքով մանրածախ առևտուրը Մեծ Բրիտանիայում մայիսին աճել է ընդամենը 0.9%-ով այն դեպքում, երբ նախորդ ամիս գրանցվել էր 4.2% աճ: Ամսական (MoM) կտրվածքով ապրիլյան 2.5% աճից հետո արդեն

մայիս ամսին գրանցվել է 1.2%-ով կրճատում: Առանց վառելիքի և ավտոմեքենաների հաշվարկվող Core ցուցանիշի համաձայն մանրածախ առևտուրը մայիսին գրանցել է 1.6% ամսական անկում և 0.6% տարեկան աճ (նախորդ 4.6%-ի փոխարեն):

Մայիս ամսվա ընթացքում բացասական տեղաշարժեր են գրանցվել Մեծ Բրիտանիայի արդյունաբերության և շինարարության ոլորտներում, ինչպես նաև վատթարացել է երկրի առևտրային հաշվեկշիռը: Մասնավորապես, շինարարության ոլորտում գրանցվել է 1.2% անկում նախկին 1.1% անկումից հետո, արդյունաբերական արտադրանքի ծավալները տարեկան կտրվածքով մայիս ամսին գրանցել են 0.2% անկում կանխատեսվող 0.2% աճի փոխարեն, ամսական (MoM) կտրվածքով անկումը կազմել է 0.1%: Վերամշակող արդյունաբերության արտադրանքի ծավալները մայիսին ամսական կտրվածքով նվազել են 0.2%-ով: Առևտրային հաշվեկշիռի

Մեծ Բրիտանիա / Գործազրկության մակարդակ / 2016-2017թթ. (ամսական)



բացասական սալոն մայիս ամսին հասել է 11.86 մլրդ. ֆունտի նախկին 10.60 մլրդ-ի փոխարեն: Ոչ ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի բացասական սալոն ևս մայիս ամսին ավելացել է՝ նախկին 2.63 մլրդ-ից հասնելով 3.8 մլրդ. ֆունտի:

Գործազրկության մակարդակը երկրում մայիս ամսին նվազել է մինչև 4.5% (1970-ական թվականներից հետո գրանցված նվազագույն արժեք):

Զինաստան: 2017թ., հունիսին զգալիորեն աճել են Զինաստանի և՛ արտահանման և՛ ներմուծման ծավալները: Արտահանման ծավալները դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 11.3%-ով, իսկ ներմուծումը՝

սալոն հունիսին կազմել է 42.7 մլրդ. ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ Զինաստանի արտահանման ծավալների աճն 2017թ. առաջին կիսամյակում կազմել է 8.5%, իսկ ներմուծումն ավելացել է 18.9%-ով: Արտաքին առևտուրն 2017թ. առաջին քառորդում աճել է 13%-ով:

Սպառողական գները Զինաստանում հունիս ամսին աճել են 1.5%-ով (YoY), իսկ արդյունաբերական գները՝ 5.5%-ով (YoY):

Հիշեցնենք, որ Զինաստանի ՀՆԱ աճն 2017թ. առաջին քառորդում կազմել է 6.9%: Նախորդ տարի ՀՆԱ տարեկան աճի տեմպերը նվազել էին մինչև 6.7%: 2017թ. համար Զինաստանի կառավարությունը սահմանել է ՀՆԱ աճի 6.5% ուղեմիջ, ինչը հանդիսանում է վերջին 27 տարիների վատագույն արժեքը:

Տարվա առաջին կիսամյակում գրեթե կրկնակի կրճատվել են Զինաստանի ոչ ֆինանսական օտարերկրյա ուղղակի ներդրումները (ODI), ինչը պայմանավորված է կապիտալի արտահոսքի զսպման հետ կապված միջոցառումների իրականացմամբ: 2017թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ օտարերկրյա ուղղակի ներդրումները կրճատվել են 45.8%-ով՝ կազմելով

USD/CNY փոխարժեք, 2016-2017թթ.



17.2%-ով՝ երկու դեպքում էլ զգալիորեն գերազանցելով սպասումները: Առևտրային հաշվեկշռի դրական


48.19 մլրդ ԱՄՆ դոլար: Չինական յուանի զգալի արժեզրկումը նախորդ տարվա վերջից ստիպեց Չինաստանի կառավարությանը ազգային արժույթի հետագա կտրուկ արժեզրկումից խուսափելու և ռեզերվները պաշտպանելու նպատակով ավելացնել երկրից կապիտալի արտահոսքի զսպման միջոցառումները և վերահսկողությունը: Միայն հունիս ամսին Չինաստանի օտարերկրյա ներդրումները կրճատվել են 11.3%-ով՝ կազմելով 13.6 մլրդ դոլար: 2017թ. հունիսին արդեն 5-րդ ամիսն անընդմեջ աճում են Չինաստանի միջազգային պահուստները՝ հասնելով 3.057 տրլն ԱՄՆ դոլարի (ամսական աճը՝ մոտ +3.22 մլրդ ԱՄՆ դոլար): Հիշեցնենք, որ նախորդ տարի Չինաստանն օգտագործել էր միջազգային պահուստներից մոտ 320 մլրդ ԱՄՆ դոլար, սակայն յուանի արժեզրկումն էապես չզսպվեց. վերջինս ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց մոտ 6.5%-ով, ինչը դարձավ 1994թ.-ից հետո ԱՄՆ դոլարի նկատմամբ յուանի ամենամեծ տարեկան արժեզրկումը (ընթացիկ տարում յուանի դիրքերն ամրապնդվել են մոտ 2%-ով):

Երկրի արդյունաբերական ոլորտում հունիսին գրանցվել է ակտիվության որոշակի աճ, ինչի մասին են վկայում PMI Ինդեքսի վերջին տվյալները.

վերամշակող արդյունաբերության PMI-ն հունիսին գրանցել է 51.7 արժեք՝ նախկին 51.2-ի փոխարեն: Չնայած ակտիվության աճին՝ արդյունաբերական արտադրանքի ծավալների աճն ինչպես և նախորդ ամիս կազմել է 6.5%:

Ճապոնիա

2017թ. մայիս ամսին բացասական տեղաշարժեր են գրանցվել Ճապոնիայի արդյունաբերության ոլորտում: Արդյունաբերական արտադրանքի ծավալներն ամսական կտրվածքով նվազել են 3.6%-ով այն դեպքում, երբ նախնական տվյալների համաձայն սպասվում էր 3.3% անկում, իսկ ապրիլին գրանցվել էր 4% ամսական աճ:



Չնայած արդյունաբերական արտադրանքի ծավալների մայիսյան կրճատմանը՝ արդեն հունիս ամսին

արդյունաբերական ոլորտում նկատվել է ակտիվության որոշակի աճ: Վերամշակող արդյունաբերության ոլորտի PMI ինդեքսը (Purchasing Managers Index) գրանցել է 52.4 արժեք նախկին 52-ի փոխարեն:

Գործազրկության մակարդակն ապրիլյան 2.8%-ից մայիսին աճել է մինչև 3.1%: 2017թ. մայիսին երկրում պահպանվել է ցածր գնաճային միջավայրը: ՍԳԻ-ն տարեկան կտրվածքով կազմել է ընդամենը 0.4%: Նախորդ տարվա մայիս ամսվա համեմատ նվազել են մանրածախ առևտրի աճի տեմպերը՝ 3.2%-ից հասնելով 2%-ի:

Ֆոնդային ապրանքների շուկա:

Նավթի շուկա: Հունիս ամսվա ընթացքում նավթի համաշխարհային շուկայում գերակայել է գների՝ դեռևս նախորդ ամսվա վերջից գրանցվող նվազող դինամիկան:

Շուկայում նավթի ավելցուկը պահպանվում է, իսկ արդյունահանման ծավալները կրճատելու պարտականությունից ազատ երկրները շարունակում են

ակտիվորեն աճեցնել այն: Լիբիայում, օրինակ, արդյունահանման օրական ծավալները հասել են 900հզ բարելի, և մինչև հուլիսի վերջ նախատեսվում է դրանք հասցնել 1մլն-ի: Այս ֆոնին նավթի շուկայի վերաբերյալ նույնիսկ դրական նորություններին նավթի գներն արձագանքում էին անկմամբ: Տարվա ընթացքում դիտված իր նվազագույն արժեքները գրանցելուց հետո (44.6 ԱՄՆ դոլար Բրենթ նավթի բարելի դիմաց), սակայն, հունիսի 21-ից նավթի համաշխարհային շուկայում սկսեց դիտվել աճողական դինամիկա: Շուկայում նման վարքագծի պատճառն ԱՄՆ-ում նավթի արդյունահանման ծավալների կրճատման նշանների ի հայտ գալն էր: ԱՄՆ էներգետիկ տեղեկատվության ադմինիստրացիայի կողմից հունիսի 23-ին հրապարակված շաբաթական տվյալների համաձայն երկրում նավթի արդյունահանման օրական ծավալները 9.35մլն բարելից նվազել էին մինչև 9.25մլն բարել, իսկ Baker Hughes ընկերության տվյալներով նախորդ շաբաթվա ընթացքում երկրում ակտիվ նավթահորերի թիվը կրճատվել էր 2-ով՝ հասնելով 756-ի:

Բացի այդ, նավթի գների վրա իրենց խթանող ազդեցությունն էին թողնում ՕՊԵԿ-ի երկրների կողմից կատարվող վերբալ ինտերվենցիաները: Իրանի կողմից

հայտարարություն հնչեցվեց նավթի արդյունահանման ծավալների առավել մեծ չափով կրճատման հնարավորության վերաբերյալ: Մինչ այդ հաղորդագրություն էր տարածվել նաև Սաուդյան Արաբիայի կողմից երկրի ազգային նավթային ընկերության՝ «Սաուդի Արամկոյի» հրապարակած հաշվետվության մեջ որպես նավթի բարելի գնի նպատակային մակարդակ է նշվում 60 ԱՄՆ դոլարը: Թեև վերջինս կարող է և իրատեսական չլինել, սակայն շուկայում մեծ քանակությամբ առևտրային ռոբոտների առկայությունը ապահովում է շուկայի արձագանքն այս երկրից հնչեցվող ցանկացած հաղորդագրության: Շուկայում որոշակի օպտիմիզմի համար առիթ կարող էր հանդիսանալ նաև ՕՊԵԿ-ի հաղորդագրությունն այն մասին, որ ՕՊԵԿ-ի և Վիեննայի համաձայնագրի անդամ մյուս երկրները մայիս ամսվա դրությամբ

նավթի արդյունահանման ծավալների կրճատման պայմանը կատարել են 106%-ով, որը համաձայնագրի կնքման պահից գրանցված առավելագույն արդյունքն է:

Ոլորտի վերաբերյալ ԱՄՆ հաջորդիվ հրապարակած պաշտոնական տվյալները, սակայն, ինչպես նավթի արդյունահանման ծավալների, այնպես էլ ակտիվ նավթահորերի թվի վերաբերյալ, աճողական էին (աճ մինչև 9.34 մլն բարել և 763 ակտիվ նավթահոր), ինչը կրկին հանգեցրեց նավթի գների նվազող դինամիկայի: Նշենք նաև, որ Thomson Reuters-ի կողմից կատարված գնահատականների համաձայն հունիս ամսին երկրորդ ամիսն անընդմեջ ավելացել են նաև ՕՊԵԿ-ի կողմից արդյունահանվող նավթի ծավալները՝ հակառակ մինչև 2018թ մարտ ամիսն արդյունահանման ծավալները կրճատելու վերաբերյալ կնքված համաձայնագրի: Հունիս ամսին ՕՊԵԿ-ի կողմից արտահանվել է օրական 25.92 մլն բարել նավթ՝ մայիս ամսվա ցուցանիշից 450հզ բարելով, իսկ 2016թ հունիսի համեմատ 1.9մլն բարելով ավել:

Դիտարկվող

Ժամանակահատվածում Բրենթ տեսակի նավթի բարելի գինը նվազել է մոտ 5%-ով՝ 50.3 ԱՄՆ դոլարից հասնելով 47 ԱՄՆ դոլարի:

Բրենթ նավթի գնի դինամիկա, հն.



Ոսկու շուկա: Վերջին ամսինների առավելագույն արժեքներին (1293.6 ԱՄՆ դոլար ունցիայի դիմաց) հասնելուց հետո հունիս ամսին ոսկու շուկայում գները գանգել են կայուն նվազող դինամիկա: Մինչ հունիսի 14-ին ԱՄՆ ԴՊՀ նիստի կայացումը ոսկու գների անկումային դինամիկան պայմանավորված էր ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդմամբ, միջազգային քաղաքական ոլորտում (խորհրդարանական ընտրություններ Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ Հետաքննությունների Դաշնային բյուրոյի նախկին տնօրեն Ջ.Քոմիի հարցաքննություն) անորոշությունների նվազմամբ և գեոքաղաքական ռիսկերի ազդեցության թուլացմամբ:

ԴՊՀ՝ հունիսի 14-ի նիստից հետո, որում որոշում կայացվեց ԴՎԲ բազային տոկոսադրույքը բարձրացնել 0.25 կետով՝ մինչև 1.25% մակարդակը, շուկայի մասնակիցների շրջանում ոսկու նկատմամբ պահանջարկը նվազեց՝ ունցիայի գինը հասցնելով հունիս ամսվա նվազագույն՝ 1241.0 ԱՄՆ դոլար արժեքին: ԵԿԲ, Անգլիայի Բանկի, Կանադայի Բանկի կողմից մոտ ժամանակներս ԴՎԲ հավանական խստացման վերաբերյալ հնչեցված հայտարարությունները նույնպես զսպող ազդեցություն ունեցան ոսկու

գների վրա: Բարձրացող տոկոսադրույքների պայմաններում նվազում է տոկոսային եկամուտ չապահովող ոսկու նկատմամբ հետաքրքրությունը: Անկումային դինամիկան պահպանվեց նաև հուլիսի




առաջին շաբաթվա ընթացքում՝ հասնելով 1206.41 դոլար ունցիայի դիմաց նվազագույն արժեքին:

Հունիս ամսվա ընթացքում և հուլիսի առաջին օրերին ներառյալ ոսկու ունցիայի գնի անկումը կազմել է շուրջ 4.5%:

Արժույթային շուկա:

2017թ. հունիս ամիսը հազեցած էր մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք դարձան ֆինանսական շուկայում կտրուկ տատանումների պատճառ:

Չնայած, որ ամսվա առաջին շաբաթվա ընթացքում հրապարակված մակրոտնտեսական ցուցանիշները մեծաթիվ չէին՝ հունիսի 8-ին սպասվող իրադարձությունների՝ Մեծ Բրիտանիայում կայանալիք



խորհրդարանական ընտրությունների, ԵԿԲ նիստի, ԱՄՆ Հետաքննությունների Դաշնային բյուրոյի նախկին տնօրեն Ջ.Քոմիի կողմից տրվելիք ցուցմունքների սպասումների, ինչպես նաև Մերձավոր Արևելքում գեոքաղաքական ռիսկերի սրման ֆոնին արդեն ամսվա առաջին օրերից գրանցվեցին զգալի տատանումներ: Ամսվա երկրորդ շաբաթվա ընթացքում տեղի ունեցան ԱՄՆ ՖՊՀ, Անգլիայի Բանկի, Ճապոնիայի Բանկի և ՌԴ Կենտրոնական բանկի նիստերը և

հրապարակվեցին դրամավարկային քաղաքականության վերաբերյալ վերջիններիս որոշումները:

Բրիտանական ֆունտն ամսվա սկզբից գտնվում էր երկրում քաղաքական անորոշությունների բացասական ազդեցության տակ, իսկ արդեն հունիսի 8-ին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո մինչ հունիսի 21-ը GBP/USD փոխարժեքը գրանցեց մոտ 2.7% անկում՝ հասնելով վերջին մոտ 2 ամիսների նվազագույն արժեքների: Վաղաժամկետ ընտրություններ իրականացնելու վերաբերյալ վարչապետ Թ. Մեյի կողմից արված առաջարկի հիմնական նպատակը Brexit-ի գործընթացի հետագա ընթացքի ղեկավարման և բանակցությունների վարման համար ուղղակի մանդատ ձեռք բերելն էր, ինչը, սակայն վերջինիս չհաջողվեց, քանի որ ընտրությունների արդյունքում խորհրդարանում պահպանողականները ստացան ընդամենը 316 տեղ՝ անհրաժեշտ 326-ի փոխարեն: Նման պայմաններում ենթադրվում էր, որ Brexit-ի գործընթացը կլինի ավելի բարդ և երկարաժամկետ՝ բացասաբար անդրադառնալով բրիտանական արժույթի վրա:

Ֆունտի դիրքերի թուլացման ամսվա ընթացքում նպաստեցին նաև մի շարք բացասական մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակումը, Անգլիայի Բանկի ԴՎՔ որոշումն ու Բանկի նախագահ Մ. Քարնիի ոչ օպտիմիստական ելույթը: Հունիսի 15-ին Մեծ Բրիտանիայի Ազգային վիճակագրության ծառայության կողմից հարապարակվեցին երկրում մանրածախ առևտրի ծավալների փոփոխության տվյալները մայիս ամսվա համար, որոնք բացասական տեղաշարժեր ցույց տալով, դոլարի դիրքերի ամրապնդման հետ մեկտեղ հանգեցրին GBP/USD զուգի մոտ 0.9% անկման: Նույն օրը Անգլիայի Բանկի կողմից հրապարակվեց ԴՎՔ որոշումն ըստ որի՝ բազային տոկոսադրույքը պահպանվել է նախկին 0.25% մակարդակում, իսկ քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների գնումների ծավալները՝ 435 մլրդ ֆունտ մակարդակում: Հունիսի 19-ին Անգլիայի Բանկի նախագահ Մ. Քարնին իր ելույթում նշեց, որ հաշվի առնելով երկրում ինֆլյացիոն ճնշման և եկամուտների թույլ աճը, սպառողական ծախսերի և ներդրումների ոչ միանշանակ տվյալները, դեռևս ժամանակը չէ քննարկել ԴՎՔ տոկոսադրույքների բարձրացման հարցը: Արդեն հունիսի

19-ից Բրյուսելում Բրեքսիթի գծով բանակցությունների մեկնարկից հետո GBP/USD զուգի նվազման դինամիկան փոխարինվեց աճով, ինչը շարունակվեց մինչև ամսվա վերջ: Արդեն հունիսի 30-ին ամսվա ընթացքում գրանցված նվազագույն արժեքի համեմատ փոխարժեքն աճել էր ավելի քան 3.33%-ով՝ հասնելով 1.3027-ից բարձր արժեքների:


Հունիսի 8-ին ԵԿԲ կողմից հրապարակվեցին դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները, որոնք, ինչպես և սպասվում էր, պահպանվել են նախկին մակարդակներում՝ ավանդադրման տոկոսադրույքը -0.4% և վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 0.0%: Քանակական մեղմացման շրջանակներում



ակտիվների գնումների ամսական ծավալները պահպանվեցին նախկին՝ 60 մլրդ եվրո մակարդակում: Չնայած ԴՎՔ որևէ փոփոխություն

չիրականացվեց, այնուամենայնիվ վերջին ժամանակներս ԵՄ հիմնականում դրական մակրոցուցանիշների հրապարակման ֆոնին հունիս ամսվա ընթացքում զգալիորեն աճեցին խթանող դրամավարկային քաղաքականության միջոցառումների որոշակի կրճատման սպասումները՝ դոլարի դիրքերի թուլացման հետ մեկտեղ հանգեցնելով ամսվա ընթացքում EUR/USD փոխարժեքի աճի: EUR/USD զույգը հունիսին գրանցեց մոտ 1.63% ամսական աճ:

ԱՄՆ ՖՊՀ-ն, ինչպես և սպասվում էր, հունիսյան նիստում որոշում կայացրեց բարձրացնել ԴՎՔ բազային տոկոսադրույքը 25 բազիսային կետով՝ սահմանվելով 1.00-1.25% միջակայքում: ՖՊՀ-ն նշեց նաև, որ իրականացվելու են հաշվեկշռի կրճատումներ՝ մոտ 4.5 տրլն ԱՄՆ դոլարի չափով: ԴՎՔ



խստացումը որոշ չափով զսպեց ԱՄՆ դոլարի անկումը, սակայն ամբողջ ամսվա ընթացքում առավելապես բացասական տնտեսական տեղաշարժերի մասին խոսող տվյալների հրապարակումները, նվազեցնելով տարվա ընթացքում ԴՎՔ տոկոսադրույքի հետագա



բարձրացումների հավանականությունը, պատճառ հանդիսացան հունիս ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի ինդեքսի՝ մոտ 1.48% անկման:

Հունիսի 16-ին կայացած նիստում ՌԴ ԿԲ-ն ԴՎՔ բազային տոկոսադրույքը նվազեցրեց 0.25 կետով՝ 9.25%-ից այն հասցնելով 9.0%-ի: USD/RUB փոխարժեքը հունիսի 1-ից մինչև հունիսի 21-ը գրանցեց է մոտ 7.2% աճ՝ հիմնականում պայմանավորված նավթի գների անկմամբ, իսկ հունիսի 21-ից հետո մինչև ամսվա վերջ գրանցվեց մոտ 2.6% անկում:

Ֆոնդային շուկա

Հիմնական ֆոնդային ինդեքսների շարժ. 01-30 հունիսի, 2017թ

Ինդեքս investing.com	Արժեք 30.06.17թ դր.	Փոփոխություն (%)
ԱՄՆ		
Dow 30	21,349.63	1.62%
S&P 500	2,423.41	0.48%
Nasdaq Composite	6.140,42	-0,94%
Եվրոպա		
Euro Stoxx 50	3,441.88	-3.17%
Europe Stoxx 600	379.37	-2.72%
AEX	507.15	-3.23%
FTSE 100	7,312.72	-2.76%
ՌԴ		
MICEX (MMB)	1.879,50	-1,10%
IRTS (PTC)	1.000,96	-4,97%

ՀՈՒՆԻՍ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

08 հունիսի	Մեծ Բրիտանիայի Խորհրդարանական ընտրություններ/ Պահպանողականներին չհաջողվեց ձեռք բերել բացարձակ մեծամասնություն, ինչից ենթադրվում է, որ Brexit-ի գործընթացը կլինի ավելի բարդ և երկարաժամկետ՝ բացասաբար անդրադառնալով բրիտանական արժույթի վրա
08 հունիսի	ԵԿԲ նիստ/ Դրամավարկային քաղաքականությունը պահպանվեց անփոփոխ՝ վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0%, ավանդադրման տոկոսադրույք՝ -0.4%
14 հունիսի	ԱՄՆ ՖՊՀ նիստ/ ԴՎՔ տոկոսադրույքը բարձրացվեց 0.25 կետով՝ սահմանվելով 1-1.25% միջակայքում
15 հունիսի	Անգլիայի Բանկի նիստ/ Դրամավարկային քաղաքականության բազային տոկոսադրույքը պահպանվեց նախկին 0.25%, իսկ քանակական մեղմացման ծրագրի (QE) շրջանակներում ակտիվների գնումների ծավալները՝ 435 մլրդ ֆունտ մակարդակում
16 հունիսի	ՌԴ ԿԲ նիստ/ ԴՎՔ բազային տոկոսադրույքը նվազեցվեց 0.25 կետով՝ սահմանվելով 9%

